ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.

№ 14 (1151)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱԲՈՎՅԱՆԱԿԱՆ ԽՈՐԱԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԳԱՄՆԵՐՈՎ

Հոկտեմբերի 15-ին լրացավ Խաչատուր Աբովյանի ծննդյան 217-ամյակը: Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ մանկավարժ, լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունն է կրում Երևանում գտնվող Հայկական պետական մանկավարժական համասարանը, որը 1948 թվականին՝ Աբովյանի անհայտացման 100-ամյակի կապակցությամբ և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով ՀԽՍՀ Մինիստրների սովետի որոշմամբ անվանակոչվել է Խաչատուր Աբովյանի անունով: Այդ օրից անցել է 77 տարի, և մեզ համար մեծ հպարտություն ու պատիվ է աշխատել այդ սուրբ անունը կրող բարձրագույն ուսումնական հաստատությունում, որտեղ շարունակվում են աբովյանական դասերը և աբովյանական խորախորհուրդ պատգամներից ամեն սերունդ իր հունձքն է քաղում:

Աբովյանի դասերն այսօր էլ արդիական են և մեզ պարտավորեցնում են ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել ուսուցիչների պատրաստման առաքելությանը:

Աբովյանի ժամանակից սկսած մենք ապրում ենք Աբովյանով, որի փայփայած երազանքներն այսօր իրականություն են դարձել: Մեզ համար ուղենիշ են նրա արժեքավոր մանկավարժական հայացքները, որով սերունդներ են դաստիարակվում:

Մեծ աշխարհընկալման տեր անհատականություն էր նա, մեծ մանկավարժ, որ հոգևոր սնունդ էր առել եվրոպական դասական մանկավարժությունից, և հենց նրան էր վիճակված ճեղքելու ժամանակի խավարամիտ մտածողության պատնեշը և ստեղծելու մանկավարժական մի ամբողջական համակարգ՝ միաժամանակ դառնալով հայ իրականության մեջ անգերազանցելի մանկավարժը:

«Անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որն այնպես սիրով ու զոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն է...»,-ասել է Կարլ Կոխը:

Աբովյանի կյանքը մաքառում եղավ, բայց նա կարողացավ իր ժողովրդին «առաջնորդել դեպի ազատն ու գեղեցիկը, լուսավորն ու բարձրը»:

Մեծ լուսավորչի գաղափարներն ու մարգարեական խոսքերը այսօր էլ դասեր են նոր սերնդի համար՝ մերօրյա պատվիրաններ. «Դուք իրար սիրեցեք, դուք էն աշխարհքի ծնունդն էք, էն ազգի զավակը, որ աշխարհը ամենայն զարմացրել է ու կզարմացնի»:



Հանդիպում ռեկտորի մոտ. շախմատային կրթության ապդեցությունները

Հոկտեմբերի 15-ին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանի մոտ հանդիպում էր ՖԻԴԵ-ի սոցիալական հանձնաժողովի ղեկավար և Շվեյցարիայի շախմատի ֆեդերացիայի նախագահ Անդրե Վյոգտլինի հետ: Նրան ուղեկցում էր համալսարանի Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ, բուհի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար Սմբատ Լպուտյանը:

Մանկավարժական համալսարանում տարիներ շարունակ գործում է «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտը, որի համատեքստում ռեկտորը հյուրին ներկայացրեց շախմատային կրթության վերաբերյալ համալսարանի որդեգրած ուղղությունը:

Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց՝ Մանկավարժական համալսարանում չափազանց շատ են կարևորում շախմատի կրթական բաղադրիչը, որի համատեքստում համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտում 13-14 հետազոտական ծրագրեր են գործում:

Ռեկտորն անդրադարձավ մի շարք կարևոր հարցերի, որոնք ընկած են շախմատային կրթության հիմքում, և որոնց հետազոտությամբ զբաղվում են համալսարանում գործող ինստիտուտի հետազոտողները:

«Շախմատային կրթության ուսուցման հետազոտությունը կարևոր է սկսել սկզբնական կրթությունից, որովհետև ուսուցման կրթության տարրերը սկսվում են տարրական դպրոցից: Մենք պետք է հասկանանք շախմատային կրթության մեջ ներառված երեխաների վրա ինչ ազդեցություն է ունենում այդ կրթությունը, արդյո՞ք շախմատն ազդում է կրթության որակի վրա, ինչպե՞ս է ազդում, մյուս առարկաների հետ ինչպե՞ս է այն փոխազդում...»: Ռեկտորը վստահեցրեց, որ այդ և այլ հարցերի ուսումնասիրման նպատակով անց են կացվել մի շարք լայնածավալ հետազոտություններ՝ ընդգրկելով տարբեր մասնագետների՝ հոգեբանների, սոցիոլոգների և մանկավարժների: Խմբում ընդգրկել են նաև ներառական կրթության մասնագետների՝ հաշվի առնելով մեզանում համընդհանուր ներառական կրթության անցումը և հասկանալու՝ ինչպե՞ս է շախմատային կրթությունն ազդում հատուկ կարիքներ ունեցող երեխաների կարողունակությունների զարգացման, դժվար իրավիճակներում ինքնուրույն կողմնորոշվելու նրանց կարողությունների վրա: Նաև շատ կարևոր է հասկանալ՝ իմացական գործընթացում ինչպիսի փոփոխություններ են լինում, վարքային մոդելներն արդյո՞ք համարժեք են շախմատային կրթություն ստացած և չստացած երեխաների մոտ:

Սրբուհի Գևորգյանը խոսեց 21-րդ դարի ուսուցչի փափուկ հմտությունների զարգացման համատեքստում շախմատային ուսուցման հենքի վրա երեխայի հմտությունները հասկանալու կարևորությունը, միաժամանակ ներկայացրեց սկզբնական շրջանում «Շախմատ» առարկայի ուսուցիչների պատրաստման գործընթացի կարևորությունը, որով զբաղվել են ինստիտուտի մասնագետները: Ռեկտորն ընդգծեց՝ ի դեմս պարոն Լպուտյանի՝ հաջողվել է ստեղծել այն միջավայրը, որում ուսուցիչներն ու մասնագետները համատեղել են իրենց գործունեությունը:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը հանգամանորեն ներկայացրեց «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեությունը, որտեղ ներգրավված երկու կարևորագույն սարքերի միջոցով տարիներ շարունակ ուսումնասիրվում են երեխաների ֆիզիոլոգական ցուցիչները, կատարում վերականգնողական շտկումներ:

Անդրե Վյոգտլինը հետաքրքրվեց՝ արդյո՞ք հետազոտությունների ընթացքում հաշվի է առնվում արժեքային համակարգը:

Ռեկտորը ներկայացրեց այս փուլում Հայաստանի կրթական համակարգում նոր չափորոշիչների ներդրմանը համապատասխանեցված հետազոտությունները և աստիճանական արդյունքները: Շախմատը հնարավորություն տալիս է գտնելու նոր ժամանակների երեխայի դասավանդման մեթոդիկայի խնդիրների լուծումները, հաշվի առնել փոփոխությունները: Ինստիտուտում դիտարկում են նաև ներառական կապերը, հատուկ կարիքներով երեխաների վրա շախմատային կրթության ազդեցության հնարավորությունները:

Կողմերը քննարկեցին նաև այլ հարցեր՝ ժամանակակից կրթության համատեքստում՝ կապված շախմատային կրթության տարբեր ազդեցությունների հետ:

Այնուհետև այցելեցին բուհի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտ, որտեղ Անդրե Վյոգտլինը մոտիկից ծանոթացավ կառույցի գործունեությանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀՊՄՀ պատվիրակությունը մասնակցեց համաժողովի

ՀՊՄՀ պատվիրակությունը՝ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի գլխավորությամբ, Դուբլինի Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտում մասնակցեց համաժողովի:

Հոկտեմբերի 6-10-ը DeSIRe նախագծի շրջանակներում անցկացվող համաժողովի գործնական քննարկումների հնգօրյա ծրագիրը ներառում էր իրական և իրատեսական մասնագիտական հմտությունների կայացման բազմաբովանդակ մեթոդաբանական և տեխնոլոգիական դեպքերի, հաջողված փորձի և կայացումների ներկայացում, վերլուծություն, անմիջական փոխանակում:

Հիշեցնենք, որ Եվրոպական Միության Erasmus+կարողությունների զարգացման ծրագրի կողմից ֆինանսավորվող նախագծի նպատակն է Հայաստանի և

Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում զարգացնել, մշակել և ներդնել փափուկ հմտությունների համակարգված սկզբունքներ, ինչը 21-րդ դարի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներից է և թույլ է տալիս ստանալ բազմակողմանի կրթություն:

«Բարձրագույն ուսումնական հաստատությունների կարևորագույն վերջնանպատակներից է ժամանակակից աշխատաշուկայի համար բարձրորակ մասնագետների նախապատրաստումը: Անչափ բարդ է սահմանել նման մասնագետի ելքային որակների չափելի հիմքեր: Եվրոպական բարձրագույն կրթության տիրույթում, ի մի բերելով արդեն իսկ առկա հարուստ փորձը, հետազոտելով հենանշման հիմնական չափանիշները՝ մշակվել են որոշակի սկզբունքներ՝ շրջանավարտ-մասնագետի պատրաստվածության ամբողջականությունն ապահովելու նպատակով»,-ասում է ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն ու հավելում՝ այդ ամենը համակարգված ձևավորելու, ՀՀ բուհերում այդ հմտությունների ձևավորման ներքին մշակույթը խթանելու նպատակով է ստեղծված նախագիծը, որի գործակից անդամ է նաև Մանկավարժական համալսարանը:

Հայեցակարգի բաց քննարկում

Մանկավարժական համալսարանում կայացավ «Մանկավարժական կրթության ազգային հայեցակարգ 2027–2035» նախագծի բաց քննարկումը՝ ուսուցչական համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման նպատակն էր ներկայացնել Erasmus+ T4GREEN ծրագրի շրջանակում աշխատանքային խմբի մշակած հայեցակարգը՝ կարծիքների և առաջարկությունների միջոցով այն կատարելագործելու համար:

Ծրագրի համահամակարգող Ռաիսա Ավետյանը ներկայացրեց T4GREEN ծրագրի հիմնական նպատակները, արդյունքները՝ շեշտելով մանկավարժական կրթության արդիականացման և կայուն զարգացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

պական գործընկեր համալսարանների ներդրումը:

Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանն ու Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի տնօրենի տեղակալ Լիլիթ Մկրտչյանը:

Վերջիններս մանրամասն ներկայացրին «Մանկավարժական կրթության ազգային հայեցակարգ 2027–2035» նախագիծը՝ ընդգծելով նրա ռազմավարական ուղղություններն ու կրթական համակարգի ընդհանուր բարեփոխումների հետ կապը:

Նրանք վստահ են՝ նման քննարկումները կարևոր դեր ունեն քաղաքականության ձևավորման գործընթացում

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանն էլ խոսեց հայեցակարգի մշակման հիմնական շարժառիթների, սկզբունքների մասին: Նա կարևորեց ուսուցչական համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը՝ ընդգծելով՝ իրենք ոչ թե շահակից, այլ պատվիրատու են. այդ առումով չափազանց առաջնահերթ է նրանց փորձագիտական կարծիքը:

«ԵՄ-ի ֆինանսավորմամբ ծրագրերը, որ միտված են բուհական համակարգի զարգացմանը, այս դեպքում նպատակ ունեն փորձագիտական վերլուծություն ստանալ դպրոցների մակարդակով»,- նշեց բանախոսն ու ներկայացրեց փաստաթղթի մշակման գործընթացում եվրոմասնագիտական համայնքի մասնակցությունն ապահովելու առումով:

Քննարկումը շարունակվեց խմբային աշխատանքի ձևաչափով՝ Լիլիթ Մկրտչյանի և Տիգրան Միքայելյանի մոդերատորությամբ: Մասնակիցները ներկայացրին իրենց դիտարկումները, առաջարկություններն ու գաղափարները՝ ուղղված հայեցակարգի հստակեցմանը, արդյունավետության բարձրացմանը

Միջոցառման ավարտին ինտերակտիվ հարցուպատասխանի միջոցով մասնակիցները հնարավորություն ունեցան ներկայացնել իրենց հետաքրքրող հարցերն ու տեսակետները թեմայի վերաբերյալ:

Մանկավարժական համալսարանում էր Անելն Հորսը

Մանկավարաժական համալսարանում էր Վիադրինայի եվրոպական համալսարանի միջազգային հարաբերությունների հարցերով ծրագրի աշխատակից Անելն Հորսը, որի այցի նպատակն էր հայ գործընկերներին ծանոթացնել Եվրոպայի կենտրոնում գտնվող համալսարանի հնարավորություններին, որն ամբողջ աշխարհում ունի ավելի քան 250 գործընկեր:

Հանդիպմանը ներկա էին ՀՊՄՀ-ի, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, «ԿԶՆԱԿ» հիմնադրամի ներկայացուցիչները:

Անելն Հորսը ներկայացրեց բուհի կառուցվածքը՝ գործող 3 ֆակուլտետներով, ինչպես նաև մանրամասնեց «Երիտասարդների թվային դպրոց» մագիստրոսական ծրագիրը, որը զբաղված է հասարակության թվային անցման հետազոտությամբ: Անելն Հորսը, խոսելով իրենց համալսարանում բակալավրիական և մագիստրոսական կրթական ծրագրերի, կես կիսամյակ բուհում սովորելու հնարավորությունների մասին, նշեց՝ կրթությունն իրականցվում է ինչպես գերմաներեն, այնպես էլ՝ անգլերեն, որոշ դեպքերում՝ նաև լեհերեն: Հավաստիացրեց՝ բուհը մասնագիտական հմտություններից բացի, դասախոսներին և ուսանողներին կօգնի խորացնել լեզվի իմացության հնարավորությունները՝ ամենապահանջված մասնագիտությունների գծով:

Վիադրինայի եվրոպական համալսարանի ներկայացուցիչը նշեց նաև, որ ամեն տարի բուհը կրթություն ստանալու հնարավորություն է տալիս ավելի քանի 200 օտարազգի ուսանողի, ապա խոսեց փոխանակման ծրագրերի ընձեռած հնարավորությունների մասին և պատասխանեց հայ գործընկերների հարցերին՝ կրթությունը եվրոպական բուհում կազմակերպելու և շարունակելու վերաբերյալ:

Վիադրինայի եվրոպական և Մանկավարժական համալսարանների միջև համագործակցությունը կշարունակվի. կքննարկվեն պաշտոնական գործընկերության հնարավորությունները:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը:

Խաչատուր ԱԲՈՎՅԱՆ

Միջազգային առցանց գիտաժողովում

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի նախաձեռնությամբ կայացավ «Սկզբնական կրթության արդի մարտահրավերները և հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողով:

Հեռավար ձևաչափով անցկացվող ձեռնարկի նպատակն էր քննարկել սկզբնական կրթության արդի մարտահրավերները, առաջադրել նորարարական լուծումներ՝ նպաստելով նախադպրոցական և տարրական կրթության ոլորտների բարելավմանը:

Գիտաժողովին մասնակցում էին ՌԴ-ի, Չեխիայի, Լատվիայի, Ֆինլանդիայի առաջատար կրթական հաստատությունների դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ. աշխատանքային լեզուները ռուսերենն ու անգլերենն էին:

Մասնակիցներին ողջունեց և արդյունավետ գործընթաց մաղթեց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Նա իր խոսքում նկատեց՝ սկզբնական կրթությունը շարունակական կրթության անկյունաքարն է. հենց այս վաղ տարիքում են երեխաները զարգացնում իրենց՝ ապագան կերտելու համար անհրաժեշտ հմտությունները, արժեքները և վստահությունը:



Պրոռեկտորն ընդգծեց՝ այսօր մենք բախվում ենք լուրջ մարտահրավերների՝ հավասար հասանելիությունից և որակի ապահովումից մինչև սոցիալական և տեխնոլոգիական փոփոխություններին հարմարվելը. «Այս գիտաժողովը հնարավորություն կտա միասին լուծումներ փնտրել, կիսել մեր գիտելիքները, փորձը: Միավորելով տարբեր տեսակետներ՝ մենք կարող ենք ավելի խորը հասկանալ աշխարհի տարբեր անկյուններում գտնվող երեխաների կարիքները, գտնել նրանց աջակցելու նորարարական եղանակներ»:

Միջազգային գիտաժողովում զեկույցներ եղան սկզբնական կրթության այլընտրանքային և նորարարական մոտեցումների՝ հետազոտությունների արդյունքների վերլուծության, ՆՈՒՀ-ում և տարրական դպրոցում ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդների կիրառման, ներառական կրթության կազմակերպման ուղղություններով: Ներկայացվեցին ավագ նախադպրոցական տարիքի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների դերի, մեդիագրագիտության զարգացման համատեքստում արհեստական բանականության և մեդիա տեխնոլոգիաների կիրառման ներուժի, սկզբնական կրթության կառուցվածքում քաղաքացիական ինքնության դերի, ընթերցանության դասերին տարրական դասարանների աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ և այլն:

Ձեռնարկն ընթացավ տեսանյութերի դիտումով, քննարկումներով, հարցուպատասխանով:

Ուսուցիչը պետք է կարողանա մատաղ սանի սրտում բորբոքել սրբազան և ազնիվ, կրոնական և բարոյական զգացմունքներ և օգնի նրան՝ ունենալու ճիշտ հայացք շրջապատի մասին և ըստ հնարին, լրիվ գաղափար այն մասին, ինչ ինքը անում է:

Մուրատ Չոշանովի դասախոսությունը

ՀՊՄՀ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հրավերով բուհում էր ԱՄՆ-ի էլ Պասոյում Տեխասի համալսարանի ԲՏՃՄ կրթության բաժանմունքի ուսուցիչների կրթության ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Մուրատ Չոշանովը, որը «Մաթեմատիկա-ինֆորմատիկա», «Մաթեմատիկա-ֆիզիկա», «Մաթեմատիկա» մասնագիտությունների ուսանողների և ամբիոնի դասախոսների համար անցկացրեց սեմինար, մասնագիտական քննարկում:

Պրոֆեսոր Չոշանովը նկատեց՝ դեռևս 2001 թվականին է հրատարակել «Ամերիկան սովորում է հաշվել» խորագրով գիրքը, որտեղ փորձել է բազմակողմանի վերլուծել ԱՄՆ-ում դպրոցական մաթեմատիկական կրթության պրոբլեմները, ներկայացրել, թե ինչպես են համակարգային սխալներն ազդում կրթության որակի վրա. «Չնայած կան որոշ դրական փոփոխություններ, սակայն շատ դրույթներ այսօր էլ շարունակում են արդիական մնալ: Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի բարեփոխումների ոչ հաջորդական և ոչ համակարգված մոտեցումներն, ըստ դասարանների, առաջացրել են ճեղքեր դպրոցական ծրագրերում, ինչի հետևան-

քով սովորողները ոչ ամբողջական են ընկալում «Մաթեմատիկա» առարկան»:

Ըստ բանախոսի, այնուամենայնիվ պետք է ընդունել, որ կրթական լավագույն համակարգը եղել է խորհրդային տարիներին:

Մուրատ Չոշանովը մարդկային կապիտալի աճի գործում համակարգային սխալներից մեկն էլ համարեց անբավարար կամ մնացորդային ներդրումները, ինչը բացասաբար է անդրադառնում ոչ միայն կրթության վիճակի, այլև հասարակության զարգացման և երկրի պաշտպանության վրա:

Տեխասի համալսարանի պրոֆեսորը նշեց նաև, որ մեծացել է դպրոցական մաթեմատիկայի և մաթեմատիկական գիտության միջև եղած տարբերությունը. մաթեմատիկա սովորելու լիարժեք գործընթացի փոխարեն թեստային համակարգի զարգացումը բացասական ազդեցություն է ունենում աշակերտների տրամաբանական մտածողության զարգացման վրա

Հանդիպման ընթացքում գործնական օրինակների միջոցով քննարկվեցին նաև մի շարք մեթոդական հարցեր:

Բանախոսը հորդորեց հաշվի առնել ամերիկյան փորձն ու խուսափել սխալներ թույլ տալուց. ասում է՝ համակարգային սխալների հետևանքները երկարաժամկետ են բացասաբար անդրադառնում կրթության վրա. «Տագնապալին այն է, որ մենք չենք սիրում սովորել մեր սեփական սխալների վրա, առավել ևս՝ ուրիշների»:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ու պրոֆեսոր Մուրատ Չոշանովը դրական գնահատեցին առաջին համագործակցությունն ու պայմանավորվեցին իրականացնել փորձի փոխանակում, կատարել համատեղ ուսումնամեթոդական և գիտական աշխատանքներ:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

«Դուք այն երջանիկներից եք, ում համար մասնագիտական ձեռքբերումները, ներդաշնակությունը, սերը, հմայքը, արժևորումը կենսակերպ են»

Յուրի Յուզբաշյանը 90 տարեկան է: Հոկտեմբերի 14-ին Մանկավարժական համալսարանում կազմակերպվել էր հոբելյարին նվիրված հանդիսություն:

Անձ, անհատականություն, տաղանդաշատ մասնագետ, հմուտ ղեկավար, բարի սքանչելի մարդ՝ այսպես բնութագրեց հոբելյարին ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

«Պարոն Յուզբաշյանն իր ողջ գիտակցական կյանքում ստեղծել է արժեքներ, որոնց մի մասը լսարաններում է, մի մասը այստեղ՝ դահլիճում, մի մասն էլ այն դասագրքերում, որտեղ ամփոփված են մասնագիտական կրթության բովանդակության այնպիսի արժեքներ, որոնք տարիներ շարունակ պայմանավորելու են երաժշտական կրթության և երաժշտագիտության ոլորտի այն կարևորագույն ձեռքբերումները, որոնք որպես չափանիշ՝ անգերազանցելի են,-ասաց ռեկտորը: -Մասնագետները պնդում են՝ առանց Յուրի Յուզբաշյանի ներկայության ամբիոնը չի կարող պատրաստել մասնագետներ, որոնց շարունակական երաժշտության տաղանդի, երաժշտության արժեբանության, երաժշտությունը որպես օբյեկտիվ իրականության արտացոլման մի յուրահատուկ ձև և իմացական ոլորտը ներդաշնակեցնող կարևորագույն բաղադրիչ՝ ուղղորդում եք ձեր մասնագիտական ձեռագրաբանությամբ ու կարևորում»,-ասաց ռեկտորը:

Նա շնորհակալություն հայտնեց հոբելյարին այդ նվիրումի ու գործունեության համար՝ ասելով. «Դուք այն երջանիկներից եք, ում համար մասնագիտական ձեռքբերումները, ներդաշնակությունը, սերը, հմայքը, արժևորումը կենսակերպ են»:

Ռեկտորը շնորհավորեց հոբելյարին և մաղթեց երկար տարիների կյանք, առողջություն, որ նա ըմբոշխնի բոլոր այն ձեռքբերումները, որ ստեղծել է տարիների ընթացքում, ի դեմս իր հարազատների ու գործընկերների՝ մշտապես վայելի ջերմություն, սեր, հարգանք:

Յուրի Յուզբաշյանին շնորհավորեցին Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը, արվեստագիտության դոկտոր Հրավարդ Հակոբյանը, Պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ Կարեն Գևորգյանը:

«Հրաշալի է, որ հոբելյարի տարեդարձին դահլիճում ներկա է երեք սերունդ. ավանդույթները շարունակվում են երաժշտագետի շնորհիվ,-ասաց Արա Հակոբյանը:-Առանց Յուրի Վաղարշակովիչի հնարավոր չէ պատկերացնել ամբիոնի ծաղկաբույլը, որը պատիվ կբերի յուրաքանչյուր կրթական օջախի ամբիոնի ողջամտությունը, խորությունը, գիտական ներուժը, մանկավարժական գործունեությունն ամբողջությամբ պայմանավորված է Յուրի Յուզբաշյանի ներկայությամբ»:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Աննա Հարությունյանը շնորհավորեց և ջերմ խոսքեր հղեց ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Մովսես Խորենացու մեդալակիր Յուրի Յուզբաշյանին: Նա խոսեց պրոֆեսորի մարդկային որակների մասին, նաև ընդգծեց մանկավարժական բեղուն գործունեությունը. նրա դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ուսումնական ծրագրերով սերունդներ են կրթվել:

Արվեստագիտության դոկտոր Հրավարդ Հակոբյանը երկար տարիների ընկերոջ ու գործընկերոջ մասին իր խոսքը համեմեց հումորով՝ ասելով՝ ծնված օրից Յուրին երգում էր:

ՀՊՄՀ Պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ, ՀՀ ազգային պարարվեստի միության նախագահ Կարեն Գևորգյանը շնորհավորեց հոբելյարին՝ ասելով. «Այս տարիներն արժևորվեցին ոչ միայն նրա ապրած կյանքով ու կենսագրությամբ, այլև իր աշակերտներով, որոնք յուզբաշյանական մանկավարժական լուսեղեն ջահը վերցրին և տարածեցին մեր երկրի բոլոր դպրոցներում, սփյուռքի գաղթօջախներում՝ պատիվ բերելով իրենց և իրենց ծնող ժողովրդին»:

Գիտամանկավարժական գործունեության մեջ ունեցած մեծ ավանդի համար Կարեն Գևորգյանը Յուրի Յուզբաշյանին պարգևատրեց «Վահան Արիստակեսյան-125» հուշամեդալով:

Հանդիպումը լի էր բազմաթիվ անակնկալներով: Համեստ ու տաղանդաշատ ընկերոջը շնորհավորելու էր եկել և երաժշտական կատարում նվիրեց «Կադանս» անսամբլի հայտնի երաժիշտը:

Դահլիճը լեցուն էր մանուկների ժպիտներով: Կոմպոզիտորին շնորհավորելու էին եկել նրա տարբեր տարիների ուսանողները, որոնք արդեն կայացած ուսուցիչներ են: Վերջիններս բարեմաղթանքի խոսքեր հղեցին իրենց դասախոսին՝ համեմելով այն փոքրիկների ելույթներով ու երաժշտական կատարումներով:

«Դուք ձեր գործունեությամբ ապացուցում եք, որ մանկավարժությունը դժվար գործ չէ, մանկավարժությունը ստեղծագործություն է, արվեստ, ինչ-որ տեղ՝ հեքիաթ: Դուք ապացուցում եք, որ մանկավարժության ուսուցումը պետք է լինի հետաքրքիր, հիշարժան, ոգևորիչ,-ասաց N 99 երաժշտական դպրոցի ուսուցչուհին՝ հավելելով՝ դուք իսկապես մանկավարժության լույսն եք»:

Համալսարանական N 57 դպրոցում մանկավարժական պրակտիկա անցկացնող ուսանողները փոքրիկների հետ կատարեցին «Բարության ծառ» երգը, իսկ 2016 թվականի շրջանավարտ Ազնիվ Բարեղամյանը շնորհավորեց իր հոբելյար դասախոսին՝ ասելով. «Ձեր կենսագրությունը բացառապես կապված է մանկավարժության հետ, և այդ կենսագրությունը այսօրվա ուսուցիչների համար լավագույն օրինակ է»:

Վերջում ելույթ ունեցավ հոբելյարը: Նա անչափ հուզված էր՝ իրեն այսքան անմեկնելի զգացողություններ պարգևելու համար: 90-ամյակի ու հաջողություններով բեռնված ճանապարհի բարձունքից նա հետադարձ հայացքով հիշեց անցած ուղու թողած լուսավոր հետագիծը, շնորհակալություն հայտնեց իրեն ու իր բազում ձեռքբերումներին ուղեկցած մարդկանց, գործընկերներին, ուսանողներին՝ հպարտ, որ արժեքներ է ստեղծել սերունդների համար, ապրել ու ոգեշնչվել արվեստով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԵՐԵՔ ՌԵԿՈՐԴ՝ ԵՐԵՔ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԳԱՂԱՓԱՐ

«Նրա երաժշտությունը միանգամից սիրվեց, որովհետև ստանդարտից դուրս էր և արտասովոր շատերի համար, սիրվեց և մտավ հեռուստատեսային տարբեր նախագծերի մեջ: Նրա համերգները յուրահատուկ են, որովհետև ներգրավված են հսկա սիմֆոնիկ նվագախումբ, ազգային և էլեկտրոնային ժամանակակից գործիքներ, երգչախումբ և պարային հատուկ բեմադրություններ: Այս համերգները տեղի են ունեցել ոչ միայն Հայաստանում ու Արցախում, այլև աշխարհի տարբեր երկրներում՝ Ավստրալիայում, Կանադայում, Ֆրանսիայում, Բրազիլիայում, ԱՄՆ-ում և այլուր...

Համաշխարհային ռեկորդների գրքում գրանցվեց ևս մեկ հայի անուն՝ Արա Գևորգյան, 3 ռեկորդ՝ 3 յուրահատուկ գաղափարների համար»,-հանդիպումն այսպես բացեց դերասանուհի Անահիտ Կիրակոսյանը:

Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը աշխարհին հայտնի է իր երաժշտական ստեղծագործություններով: Այս անգամ նա համաշխարհային երեք ռեկորդ է սահմանել. նրա «Երևան» ստեղծագործությունը՝ նվիրված մայրաքաղաքի 2800-ամյակին, միաժամանակ կատարել են 200 քանոնահարներ՝ Հայաստանի տարբեր մարզերի երաժշտական դպրոցների սովորողներ և Մանկավարժական համալսարանի ուսանողներ, Ջիվան Գասպարյանի 90-ամյակին նախատեսված 90 դուդուկահարների փոխարեն 112 դուդուկահարներ նվագել են Մակար Եկմալյանի «Ամեն, Հայր Սուրբ» ստեղծագործությունը, ինչպես նաև աշխարհի մասշտաբով Արա Գևորգյանը ստեղծել է նոր գործիք՝ «Բաս քանոն»: Ալբերտ Զաքարյանի, Արա Գևորգյանի և այլ վարպետների ջանքերով ստեղծվեց 5 բաս քանոն, որոնք նվիրաբերվեցին Հայաստանի երգի, պարի պետական անսամբլին, Հայաստանի ազգային նվագարանների պետական անսամբլին, Թովմաս Պողոսյանի «Սայաթ-Նովա» աշուղական նվագախմբին, առաջին ստեղծված բաս քանոնը կհանձնվի Հայաստանի պատմության թանգարանին, մեկ բաս քանոնն էլ գտնվում է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնում: Պետք է նշել, որ Մանկավարժական համալսարանը միակն է աշխարհում, որտեղ դասավանդվում է բաս քանոն գործիքը (դասախոս Հասմիկ Լեյլոյան):

Կուլտուրայի ֆակուլտետում հոկտեմբերի 14-ին այդ առիթով կազմակերպված հանդիսավոր արարողության ընթացքում արժևորվեց Արա Գևորգյանի գործունեությունը, ինչպես նաև տեղի ունեցավ մեդալների ու հավաստագրերի հանդիսավոր հանձնում: WDPO համաշխարհային ռեկորդների գրքի մոսկովյան գրասենյակի պատասխանատու Թերեզա Հովհաննիսյանն ասաց, որ հարգելի պատճառներով բացակայում էին Մեքսիկայում գտնվող գրասենյակի մյուս ներկայացուցիչները: Նա իր համար մեծ պատիվ համարեց անվանի երաժշտին պարգևներ հանձնելն ու նկատեց՝ Արա Գևորգյանին ամբողջ աշխարհն է ճանաչում. վստահ է՝ նոր ռեկորդներ նա դեռ կսահմանի:

Արա Գևորգյանը ներկայացրեց այն բարդ ու անկարելի թվացող աշխատանքը, որ իրականացրել է քանոնահարների ու դուդուկահարների հետ՝ համացանցով հրավիրել է փորձերի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում, որին մեծ թվով երաժիշտներ են արձագանքել: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին՝ ուսանողներից մինչև ռեժիսոր ու նկարահանող:

Հանդիսությունը վարող դերասանուհի Անահիտ Կիրակոսյանը ներկայացրեց Արա Գևորգյանի անցած ճանապարհը, որտեղ Մանկավարժական համալսարանն իր ուրույն տեղն է գրավում. Արան ավարտել է այս բուհը, ապա աշխատանքային կենսագրությունը կերտել Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնում, 2005 թվականից էլ դարձել այդ ամբիոնի վարիչը:

Յուրահատուկ հոգատար մարդ, լավ ընկեր, կոմպոզիտոր և գյուտարար՝ Արա Գևորգյանին տեսաշարով այսպես բնութագրեցին անվանի երաժիշտներն ու ճանաչված անհատականություններ՝ Սերգեյ Աղաջանյան, Ջիվան Գասպարյան, Արտավազդ Եղոյան, Էդվարդ Միրզոյան, Օհան Դուրյան, Հովհաննես Չեքիջյան:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը համալսարանի անունից շնորհավորեց Արա Գևորգյանին՝ նրան համարելով հմուտ ղեկավար, բարի ու համեստ մարդ. նա բուհի ձեռքբերումն է, որ յուրաքանչյուր օր իր գործունեությամբ մարմնավորում է արժեքներ, որոնք կարևորված են, որոնք անհրաժեշտ են և պայմանավորում են այսօրվա և ապագայի մեր գոյության գրավականը:

Ներկաները դիտեցին երեք ռեկորդների մասին պատմող տեսաշար, իսկ միջոցառումը գեղեցիկ կատարումներով ամբողջացրին ամբիոնի համույթները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մեթոդամանկավարժական հիմնախնդիրների համապեքստում

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում բացվել է «Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրների հետազոտության գիտական կենտրոն», որը ղեկավարում է մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, պատմության դասավանդման մեթոդիկայի գծով միակ գիտական աստիճան ունեցող դասախոս Հարություն Գևորգի Պապոյանը:

-Պարոն Պապոյան, կներկայացնե՞ք կենտրոնի առաքելությունը:

-Կառավարության կողմից հայտարարված մրցույթին մենք ներկայացրինք մի ծրագիր, որը վերաբերում էր պատմության դասավանդման մեթոդիկային, և կարծեք թե մեր ծրագիրը լավագույնը ճանաչվեց: Մեր հիմնական նպատակն է հինգ տարիների ընթացքում դասագրքեր գրել և՛ Սփյուռքի դպրոցների համար, և՛ մասնակցել Հայաստանում պատմության դասավանդման հիմնախնդիրների լուծմանը, դասագրքերի մրցույթին, հանդես գալ նոր մեթոդական առաջարկություններով, որոնք կնպաստեն սովորողների ուսման որակի արդյունավետության բարձրացմանը, և որ ամենակարևորն է, սովորողների ինքնուրույն ճանաչողության զարգացմանը: Իսկ այդ երկուսը միասին պետք է նպաստեն սովորողների մոտ դրդապատճառների առաջացմանը: Առանց այս եռամիասնության հնարավոր չէ ուսման մեջ հասնել հաջողությունների:

-Ի՞նչ եք ծրագրել այդ նպատակին հետամուտ լինելու համար:

-Այդ նպատակով առաջին տարում մենք համապատասխան աշխատանքները ծրագրավորեցինք և աշխատանքի ու առաջադրանքների բաժանում կատարեցինք: Միջազգային լայն ճանաչում ունեցող ամսագրերում մենք տպագրեցինք մի շարք հոդվածներ, մեր կենտրոնի աշխատողները հոդվածներ են ներկայացրել Կուբայում հրատարակելու համար, պատրաստվում ենք ընթացիկ տարում skopus-ում ներկայացնել ևս 3 հոդված:

-Որքան գիտեմ՝ մարզային այցելություններ եք պատրաստվում իրականացնել...

-Նախատեսել ենք հոկտեմբերի 18-ին լինել Տավուշի մարզում, որտեղ փորձարկվել են պետական նոր չափորոշիչները: Ուզում ենք անձամբ հասկանալ չափորոշիչների արդյունավետության մակարդակը: Այդ նպատակով տեղի ուսուցիչների համար պետք է անցկացնենք սեմինարներ, լսենք ուսուցիչների առաջարկությունները, որից հետո նույն աշխատանքը պետք է իրականացնենք Սյունիքի ուսուցիչների հետ, որտեղից էլ կտեղափոխվենք Շիրակի մարզ:

- Աշխատանքի ինչպիսի՞ բաժանում եք արել...

-Մենք աշխատանքը բաժանել ենք սեկցիաների. Սփյուռքի մասը հանձնարարվել է պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանին և դոցենտ Էդգար Հովհաննիսյանին, որովհետև նրանք հաճախակի են հանդիպումներ ունենում Սփյուռքում, Էդգար Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսությունը հենց նվիրված է դրան, դրա համար Սփյուռքի ուսուցիչների հետ կապը հանձնարարվել է նրանց:

-Ի՞նչ կասեք Գիտության կոմիտեի անցկացրած մոնիտորինգի արդյունքների մասին:

- Գիտության կոմիտեի կողմից մոնիտորինգ անցկացվեք, և երբ ստացանք մոնիտորիգի արդյունքները, տեսանք, որ ընդհանուր առմամբ մեր նախագծի վերաբերյալ լուրջ թերություններ չէին մատնանշել, միայն արել էին մեզ համար ընդունելի մի քանի առաջարկություն, ըստ որի մեր կենտրոնը պետք է ունենա կայքէջ կամ, հակառակ պարագայում, առանձին էջով ներկայանա համալսարանի կայքում և ներկայացնի մեր կատարած աշխատանքները, նաև ակտիվացնի համագործակցությունը այլ կենտրոնների հետ:

-Բայց Դուք բավականին ակտիվորեն աշխատում եք համագործակցային կապեր ստեղծելու ուղղությամբ, այնպե՞ս չէ...

-Այո, երկու գիտական համաժողով ենք կազմակերպել, տարեկան երկու անգամ հրատարակում ենք մեր «Պատմության ուսուցման հիմնախնդիրներ» ամսագիրը, և այս տարի պատրատվում ենք դիմել ԲՈԿ-ին, որպեսզի ամսագիրն ընդգրկվի գիտական պարբերականների ցուցակում:

Նոյեմբերին նախատեսում ենք այս տարվա 3-րդ համաժողովը, որին մենք արդեն ունենք բազմաթիվ հայտեր, որից 7-ը արտերկրից՝ Ռուսաստանից, Սերբիայից, Վրաստանից, Սլովակիայից, սպասում ենք, որ հայտեր կստանանք Գերմանիայից և Լեհաստանից: Անցյալ տարվա մեր կազմակերպած համաժողովին մասնակցում էին ամերիկյան և գերմանական կոլեգաները: Դեռ ժամանակ ունենք և հույս ունենք, որ այս տարվա համաժողովն ավելի ընդգրկուն կլինի մասնակիցների թվով, և կքննարվեն ավելի լուրջ մեթոդամանկավարժական հիմնախնդիրներ, որոնք կնպաստեն մեր երկրում «պատմություն» առարկայի դասավանդման հիմնախնդիրների արդիականացմանը՝ դյուրացնելու սովորողների կողմից պատմական գիտելիքների ընկալումը, և ամենակարևորը՝ պատճառահետևանքննային կապերի և եզրահանգումների ստեղծումը, առանց որի պատմական գիտությունը գոյատևել չի կարող:

-Ե՞րբ է պատմությունը դառնում գիտություն:

- Պատմությունը գիտություն է դառնում այն ժամանակ, երբ մենք լավ ուսումնասիրելով անցյալը՝ կարողանում ենք կանխատեսել ապագան:

-Մեթոդական իմաստով ի՞նչ տարբեր մոտեցումներ եք կիրառելու:

-Մեթոդական իմաստով մենք տարբեր մոտեցումներ ենք իրականացնում՝ նախագծային, հարցաշարային, թեստային, հարցազրույցներ ուսուցիչների հետ:

Մեր գիտական մեկ ուսումնասիրությանը մասակցել է 100-ից ավելի ուսուցիչ, և արդեն պատրաստ է մեր 4-5 հոգով կատարած թիմային աշխատանքը: Մինչև նոյեմբերի վերջը հոդվածը կուղարկենք տպագրության միջազգային գիտաչափական շտեմարաններում:

-Կարելի է ենթադրել, որ դպրոցներում «Պատմություն» առարկայի դասավանդման գործում մեթոդական հիմնախնդիրներ կան, որի լուծմանն է միտվածֆակուլտետում բացված կենտրոն-լաբորատորիան... Այդ հիմնախնդիրները կապվա՞ծ են արդյոք հանրակրթական դպրոցների պատմության դասագրքերի հետ...

-Այո, իհարկե, դասավանդման մեթոդիկայում հիմնախնդիրներ կան: Մենք նաև փորձում ենք մեր մասնակցությունն ունենալ առարկայի դասագրքերի ստեղծմանը: 1926 թվականի գարնանը մենք թերևս կհասցնենք հրատարակել 7-8-րդ դասարանների «Համաշխարհային պատմություն» առարկայի տետրերը, որոնք մեթոդական առումով կնպաստեն սովորողների ընկալունակության բարձրացմանը: Առաջիկայում պատրաստվում ենք մասնակցել դասագրքերի ստեղծման գործին, և մեր ստեղծած դասագրքերը գիտամեթոդական առումով պետք է տարբերվեն այսօրվա գործող դասագրքերից: Մեր կենտրոնի աշխատողների մի մասը նախկինում ունեցել է դասագրքաստեղծ գործունեության փորձ, ունենք մեծ ներուժ, որի օգնությամբ առաջիկայում կմասնակցենք մեր առարկայի դասագրքերի ստեղծմանը և պատվով դուրս կգանք:

-Պարոն Պապոյան, որո՞նք եմ պատմության դասավանդման հիմնական մեթոդական խնդիրները և դրանց միտված Ձեր առաջին քայլերը:

-Հատուկ հարցաթերթիկներ ենք պատրաստել ուսուցիչների համար, որտեղ նրանք պետք է մատնանշեն առարկայի դասավանդման, դասագրքերի և ուսուցչի աշխատանքի հետ կապված հիմնախնդիրներ՝ ի՞նչ դժվարությունների են հանդիպում, ինչ առաջարկություններ ունեն, թեմատիկ փոփոխությունների հետ կապված ինչ նկատառումներ ունեն...

Երեք մարզում մեր նախատեսած այցելությունները հիմնականում վերաբերում են նախագծային ուսուցման առանձնահատկություններին, Խ. Ստեփանյանի և Է. Հովհաննիսյանի հետ պատրաստում ենք աշխատություն, որը կարծում եմ, շատ պետք է օգնի ուսուցիչներին: Ցավոք, ուսուցիչների հետ մեր զրույցներից պարզվում է, որ նրանց մի մասը դեռ չի պատկերացնում նախագծային համակարգի էությունը, և շատ ուսուցիչներ նախագծային դասերը փորձում են միմյանց նմանեցնել: Պետք է ընդգծեմ, որ երիտասարդ ուսուցիչները հաճախակի են կազմակերպում նման դասեր, որոնցում դրվում են ներառարկայան, միջառարկայական կապեր:

-Ի՞նչ է տալիս սովորողին նախագծային աշխատանքի մեթոդը:

-Ուսուցչի գլխավորությամբ սովորողները ավելի շատ ինքնուրույն աշխատանք են իրականացնում: Ուսուցիչը գրականություն է տալիս, ուղղորդում է նրանց, իսկ աշակերտները փնտրելու ընթացքում գտնում են նոր գրականություն, գտնում են պատճառահետևանքային կապեր: Մենք առաջարկում ենք ուսուցիչներին նախագծային աշխատանքների հիմքում դնել վիճելի հարցեր պարունակող թեմաներ, երեխաները ծանոթանան տարբեր հեղինակների կարծիքներին, մոտեցումներին և փորձեն հասկանալ՝ ինչու տարբեր կարծիքներ կան նույն հարցի շուրջ: Այդպես նաև հետաքրքրություն կառաջանա սովորողների մոտ:

Ցավոք, այսօր կրթական համակարգում բացակայում է մի շատ կարևոր բան՝ դրդապատճառները. ինչու են պակասել դրդապատճառները, ինչ պետք է մենք անենք, որ դրդապատճառները շատ լինեն, որոնք կտանեն սովորողների ինքնուրույն ճանաչողության զարգացմանը:

Մենք կարևորություն ենք տալիս ստեղծագործական-որոնողական մեթոդին, իսկ նախագծային աշխատանքի մեծագույն առավելություններից մեկը հենց այդ ստեղծագործական-որոնողական կարողությունների հայտնաբերումն է:

-Ձեր կարծիքով ո՞ր մեթոդն է սովորողի համար պատմության դասն ավելի հետաքրքիր դարձնում:

-Ամբողջ խնդիրն այն է, որ այսօր աշխարհում մոդուլային դասատիպը հենց առաջացել է այդ պատճառով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ահռելի ֆինանսական միջոցներ սկսեցին հոսել դեպի Ամերիկայի Միացյալ Նահանգներ զենքի առևտրից, ամերիկյան երիտասարդությունը սկսեց չսովորել, որովհետև քոլեջների տված կրթությամբ բավականին բարձր աշխատավարձ էին ստանում և չէին ձգտում ոչ դպրոցում, ոչ բուհեում խորացնել իրենց մասնագիտական գիտելիքները, և ամերիկյան մեթոդամանկավարժական միտքը հղացավ նոր մեթոդ: Դասագրքերի վերջում նրանք դրեցին հետաքրքիր նյութեր: Ուսուցիչն առաջարկում էր թեմայից բացի նայել հետաքրքիր նյութերը՝ մոդուլները: Աշակերտներին այնքան էին գրավել այդ նյութերը, նրանք բավարարվում էին միայն այդ մոդուլների ուսումնասիրմամբ: 50-ական թվականների վերջին ամերիկյան մեթոդամանկավարժական միտքը հասկացավ՝ դրանք պետք է համատեղել՝ մոդուլային նյութը բերել թեմայի մեջ: Այնուհետև դասի ծավալը փոքրացրին՝ թողնելով այդ լրացուցիչ նյութերը:

Այսօր, երբ մենք չունենք 10-11-րդ դասարանների նոր չափորոշիչներին համապատասխանող դասագրքեր, նախարարությունը նոր մոդուլներ է ուղարկել դպրոց, ինձ թվում է դա նույնն է, ինչ որ 60-ական թվականներին կատարվում էր Ամերիկայում, սակայն այսօր մեզանում շատ արագ գործընթացներ են տեղի ունենումգ եթե Ամերիկայում դա տևեց մի քանի տասնամյակ, ես հույս ունեմ, որ մեզանում այդ գործընթացը կավարտվի 2-3 տարի, եթե ոչ ավելի շուտ: Որովհետև կա համաշխարհային փորձը, մենք այսօր դա շատ լավ ուսումնասիրում ենք, և դա կնպաստի նոր դրդապատճառների զարգացմանը. սովորողները կհասկանան՝ ինչու է անհրաժեշտ սովորել:

-Իսկ համաշխարհային փորձը զուտ տեղայնացնելը որքանո՞վ է օգտակար մեզ համար:

- Համաշխարհային փորձը եթե զուտ տեղայնացնենք, բնականաբար չի համապատասխանի մեր ժողովրդի առանձնահատկություններին, մեր մոտեցումներին, մեր ազգային խնդիրներին: Համաշխարհային փորձը վերցնելով՝ փորձում ենք փորձարարական մեթոդներով համապատասխանեցնել մեր պայմաններին. որը իրեն արդարացրեց՝ իր կշարունակի իր կենսունակությունն ունենալ, որը չարդարացրեց՝ մեզ մոտ կիրառություն չի ստանա:

Զարգացած երկրների ժողովուրդների առանձնահատկությունները որոշակիորեն տարբերվում են՝ սկսած սովորույթներից, վերջացրած ավանդույթներով, մտածելակերպով, պետական գաղափարախոսությամբ: Մենք այսօր պետք է փորձենք հետ չմնալ համաշխարհային զարգացման գործընթացներից, հապաղելու դեպքում հետ մնալու գործընթացն ավելի ակնհայտ կդառնա:

Մեր նպատակն է՝ քայլել քաղաքակրթությունների համաշխարհային մեթոդական մտքի զարգացմանը հավասարաչափ, որպեսզի կարողանանք շարունակել այն դարավոր ավանդույթները, որ ունի մեր դպրոցը, չթողնել, որ այլ երկրների մեթոդական համակարգերն իրենց գերիշխանությունը հաստատեն և վնասեն մեր ազգային ինքնությանը:

Հարցազրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Նանսենյան մարդասիրության մերօրյա դասերը

Երևանի քաղաքապետարանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի նախաձեռնությամբ, Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտ-հիմնադրամի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աջակցությամբ Մանկավարժական համալսարանում անցկացվեց «100 տարի անց. Ֆրիտյոֆ Նանսենի ոտնահետքերով» խորագրով եռօրյա համահայկական գիտաժողով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանը:

«Կան մարդիկ, որոնց կյանքը և գործունեությունը համամարդկային նշանակություն ունի: Նման անհատականություններից է հայ ժողովրդի մեծ և նվիրված բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը»,-ասաց Կ. Վարդանյանը:

Բանախոսը մասնավորապես ասաց. «Նանսենի հասարակական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավել հայանպաստ աշխատանքը, ջանքերը Հայ դատի արդարացի լուծման և հայ գաղթականների դրության բարելավման համար: Նա այն եզակիներից է, ով խստագույնս դատապարտել էր երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը: Նանսենն օգնել է գաղթականներին, բազմահազար հայ փախստականներ ստացել են «Նանսենյան անձնագրեր»: Առաջարկել է պայմաններ ստեղծել հայ գաղթականներին Հայաստան հայրենադարձելու համար, գլխավորել է հայրենադարձության հանձնաժողովը (1925-29 թթ.): Այդ նպատակով Նանսենն իր հանձնաժողովով 1925թ. հունիսին ժամանել է Երևան, եղել է հանրապետության տարբեր շրջաններում, պարզել գաղթականներին ընդունելու հնարավորությունները: Վերադառնալով Ժնև՝ Ազգերի լիգային ներկայացրել է զեկուցագիր, ըստ որի՝ օգնություն ցուցաբերելու դեպքում Հայաստանը կարող էր տեղավորել 25-30 հազար գաղթականի: Տեսնելով, որ Ազգերի լիգան դանդաղում է հայ գաղթականության հայրենադարձման հարցում, Նանսենն ինքն է մարդասիրական ուղիներով հայթայթել անհրաժեշտ միջոցներ և տրամադրել 7 հազար հայ գաղթականների հայրենադարձության կազմակերպման համար: Նանսենի բազմաթիվ հոդվածներ, զեկուցագրեր, ելույթներ նվիրված են հայ ժողովրդի պատմությանն ու Հայաստանին: 1927թ. նորվեգերեն հրատարակվել է նրա «Հայաստանում» ծավալուն գիրքը, որը թարգմանվել է անգլերեն ու ֆրանսերեն՝ «Հայաստանը և Մերձավոր Արևելքը», գերմաներեն՝ «Խաբված ժողովուրդ» վերնագրերով: Այսօր Նանսեն քաղաքացու և մեծ մարդասերի անունը պարբերաբար հիշատակվում է մեր կողմից, քանի որ Երևանում գործում է «Ֆրիտյոֆ Նանսեն» ինստիտուտ-հիմնադրամը» և Նանսենի թանգարանը: Նանսենի անունով կոչվել են փողոցներ և դպրոցներ Երևանում, Դիլիջանում, Արմավիրում, Սպիտակում, Ստեփանավանում: Երկրաշարժից հետո Սպիտակ քաղաքում նորվեգացիները 1989 թ. կառուցել են հիվանդանոց, որի բակում տեղադրվել է Ֆրիտյոֆ Նանսենի կիսանդրին, Երևանի Նոր Նորք թաղամասի զբոսայգում՝ «Նանսենյան անձնագրի» արձանը»:

Կամո Վարդանյանը վստահեցրեց՝ եռօրյա գիտաժողովի հարուստ ծրագրի հիման վրա ներկայացվող ելույթները կամբողջացնեն, նորովի կմեկնաբանեն Նանսենի գործունեության մուլտիդիսցիպլինար և բազմաօրբիտալային բնույթը, որոնք չեն սպառվում անցյալով այլ միտված են ապագային, քանի որ այսօր էլ մարդկությունը մեծ կարիք ունի նման հումանիստների, նման քաղաքացիների և անհատների:

Ելույթ ունեցավ Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի տնօրեն Ժորա Հակոբյանը, որն արժևորեց Նանսենի մարդասիրական գործունեությունը, հոբելյանական տարվա համատեքստում ներկայացրեց միջոցառումների մեծ ծրագիրը, որը դեռևս 2024 թվականին մտահղացել է երջանկահիշատակ գրող, գրականագետ, թարգմանիչ Ֆելիքս Բախչինյանը: Նա ընդգծեց, որ հոբելյանական տարվա ծրագիրը կիրականացնեն Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանը և Նանսենի հիմնադրամ-ինստիտուտը:

Մեծ մարդասերին նվիրված զեկուցումները բազմազան էին ու բազմաշերտ՝ Նանսենի գործին հայաստանյան մամուլի անդրադարձից մինչև Հայ Առաքելական եկեղեցու դերի արժևորում Նանսենի «Խաբված ժողովուրդ» գրքում, Նանսենի դասերից մինչև նրա հայտնագործած գիտագործնական նշանակությունը և դերը աշխարհագրական կրթության շրջանակում: Զեկուցումները վերաբերում էին նաև Նանսենի Հայաստան կատարած այցելության վավերագրմանը, մանկատների ստեղծման մարդասիրական առաքելությանը, Նանսենյան անձնագրերին՝ որպես մարդասիրության խորհրդանիշ, ինչպես նաև Նանսենյան անձնագրին՝ որպես հայ փախստականների կեցության խնդրի լուծման փորձի:

«Նանսենը սիրված ու պահանջված անուն է հատկապես հայ ժողովրդի համար: Ահա թե ինչու, երբ տարածաշրջանային բարդ հակամարտությունների, պատերազմական գործողությունների և դրանց հանգուցալուծումների արդյունքում հաճախ ոտնահարվում են հայ ժողովրդի և նրա պետականության շահերը, հայացքը կրկին ուղղում ենք դեպի 20-րդ դարի սկիզբ: Անզեն աչքով անգամ տեսանելի է, թե որքան ճշգրտությամբ կարող է կրկնվել պատմությունը: Եվ հենց այդտեղ է, որ կրկին մեր առջև իր ամբողջ վիթխարիությամբ վեր է հառնում բոլոր ժամանակների մեծագույն մարդասերի ու հայրենասերի՝ Ֆ. Նանսենի վեհ կերպարը, որն իր բազմաթիվ առաքելությունների շարքում կարևորեց ամենասրբազանը՝ հայ ժողովրդի դատի պաշտպանությունը:

Գրեթե չկա գիտական, հասարակական և մարդկային հարաբերությունների մի բնագավառ, որտեղ Նանսենը թողած չլինի անժամանակավրեպ ժառանգություն և դասեր»,- ասաց թարգմանիչ, նանսենագետ Կարմեն Ահարոնյանը:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՊՄՀ դասախոս Սիմա Դայանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի և Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի մագիստրոսներ Արուս Այվազյանը և Ֆելիքս Բախչինյանը:

«Նանսենի մարդասիրական գործի ամենամեծ ձեռքբերումներից մեկն էր «նանսենյան անձնագրի» ստեղծումը, որը ոչ միայն փաստաթուղթ էր, այլև մարդասիրական գաղափարի խորհրդանիշ»,-ասաց Արուս Այվազյանը, ում զեկուցումը նվիրված էր մեծ մարդասերի կողմից Հայաստանում գաղթական երեխաների համար մանկատների բացմանը:

Ֆելիքս Բախչինյանը հանգամանորեն ներկայացրեց տարբեր երկրներում հանգրվանած հայ փախստականների հայրենադարձության ծրագրի իրականացման նանսենյան ձեռնարկը:

Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի տնօրենի պաշտոնակատար Ռուզաննա Բարսեղյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց Հայաստանում Ֆրիտյոֆ Նանսենի գործունեության ու ընդհանրապես մարդասիրական առաքելության մասին բազմաթիվ գրքերի հեղինակ ու ջատագով գրող Ֆելիքս Բախչինյանի թողած ժառանգությանը. վերջինս Նանսենի մասին հրատարակել է հինգ տասնյակից ավելի գրքեր, որոնցից 600 կտոր գիրք նվիրել է գրադարանին:

Գիտաժողովի մասնակիցները մեծ ուշադրությամբ լսեցին Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտ-հիմնադրամի գործադիր տնօրեն Հայարփի Խաչատրյանի զեկուցումը, որը հանգամանորեն ներկայացրեց մեծ մարդասերի 1925 թվականի հունիսի 17-ի հայաստանյան այցի կարևոր փաստերն ու նշանակությունը:

Գիտաժողովն ամփոփեց թանգարանի տնօրեն Ժորա Հակոբյանը, որը ամփոփ ներկայացրեց Նանսենի հայաստանյան այցի հոբելյանական տարվա կազմակերպված և կազմակերպվելիք նախաձեռնությունները: Բազմաթիվ ձեռնարկների շարքում նա առանձնացրեց Նանսենի մասին ստեղծված փաստավավերագրական ֆիլմը, որի ռեժիսորն է Էդուարդ Տեր-Սահակյանը:

Ժորա Հակոբյանը շնորհակալություն հայտնեցին Մանկավարժական համալսարանի ղեկավարությանը՝ մեծ մարդասերի կյանքին ու գործունեությանն անդրադարձող գիտաժողովին աջակցելու համար:

Գիտաժողովին ներկա էին մտավորականներ, նանսենագետներ, ՀՊՄՀ տարբեր ֆակուլտետների ուսանողներ: Ապագա մանկավարժների ու հոգեբանների համար նանսենյան դասերը կյանքի օրինակներ են, որոնցով պետք է դաստիարակել սերունդներին:

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ԲՈՒՀԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆ Է

Մարիետա Վազգենի Գզրարյանը 2012 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի բակալավրիատը, 2014 թվականին՝ մագիստրատուրան: Արդեն 7 տարի Ռուսաց լեզու և գրականություն է դասավանդում ՀՊՄՀ N 57 հիմնական դպրոցում: Նա ամեն օր սիրով է բացում հանրակրթական դպրոցի դուռը՝ իր ընտրած մասնագիտությանը հավատարիմ ու անտրտունջ աշխատում երեխաների հետ, նրանց փոխանցում հոգու ջերմությունն ու լույսը:

«Ամենամեծ ներդրումը, որ կարող ես անել աշխարհում, մարդու գիտակցության մեջ լույս վառելն է»

- Հարգելի Մարիետա Վազգենի, որպես Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, տարիների հեռվից ի՞նչ լուսավոր հուշեր են մնացել Ձեր հիշողության մեջ հարազատ բուհի մասին:

- Անսահման երազներով, ծիծաղով լի ժամեր: Այդ պատերի մեջ ես գտա ոչ միայն գիտելիք, այլ նաև ինձ:

-Պատմեք Ձեր ընտանիքի և ուսուցչի մասնագիտությունն ընտրելու պատճառների մասին:

- Ես ընտրել եմ ուսուցչի մասնագիտությունը, որովհետև հավատում եմ՝ ամենամեծ ներդրումը, որ կարող ես անել աշխարհում, մարդու գիտակցության մեջ լույս վառելն է:

- Ուսուցչի աշխատանքի հանդեպ հասարակության մոտեցումները փոխվել են, միաժամանակ օրեցօր զարգացող տեխնոլոգիաներն ինչ-որ չափով սովորողների աչքում նսեմացրել են ուսուցչի դերը, արագ փոփոխվող ժամանակը նոր խնդիրներ է առաջադրում ուսուցչին. ի՞նչ եք կարծում՝ ո՞րն է մերօրյա ուսուցչի առաքելությունը, երբ շատերը դժվարանում են աշխատել դպրոցներում, ելքե՞ր փնտրել ստեղծված իրավիճակից:

-Մերօրյա ուսուցչի առաքելությունը միայն գիտելիք փոխանցելը չէ: Նա պետք է ձևավորի ազատ մտածող, պատասխանատու և ստեղծագործ անհատ:

-Լեզուներ իմանալը շատ կարևոր է և անհրաժեշտ, նրանցով կարող ես հաղորդակցվել աշխարհի հետ: Բայց վատ է, երբ մեկը մյուս լեզվի հաշվին է գոյատևում, առաջ մղվում: Յուրաքանչյուր լեզու ունի իր հմայքն ու առավելությունները: Հիմա անգլերենի ժամանակներ են. ինչպե՞ս եք անում, որ ռուսաց լեզվի դասերը հետաքրքրեն սովորողներին:

-Սովորողին հետաքրքրում է այն, ինչ կապ ունի իր առօրյայի, հետաքրքրությունների, մշակույթի հետ: Ես սովորեցնում եմ, որ լեզուն կամուրջ է, ոչ թե պատ:

-Ձեր կարծիքով, այսօր ի՞նչը չի բավարարում ուսուցչին՝ դասապրոցեսը ճիշտ կազմակերպելու համար: Դաստիարակության խնդիրները դպրոց-ընտանիք-դպրոց համագործակցության բացակայության խորքո՞ւմ պետք է փնտրել...

- Ուսուցիչը հաճախ ստիպված է մեծ ծավալի նյութ անցնել կարճ ժամանակում, որի արդյունքում դասը դառնում է մրցավազք ժամանակի դեմ, ոչ թե ստեղծագործ գործընթաց:

- Ձեր ուսուցչական պրակտիկայում հատկապես ի՞նչ թերություններ եք նկատել, ինչպե՞ս եք կարողացել շտկել դրանք:

-Այսօր ուսուցչին շատ հաճախ չի բավարարում ոչ թե ցանկությունը, այլ պայմանները՝ ժամանակը, աջակցությունը, հնարավորությունները:

-Ո՞րն է դեպի սովորողը տանող ամենաարդյունավետ ուղին:

-Դեպի սովորողը տանող ամենաարդյունավետ ճանապարհը սրտով է անցնում: Երբ սիրտը բաց է, ճանապարհի միշտ կգտնվի...

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

«Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է իր ուսուցչին»

Մարդու կյանքի ամենակարևոր ընտրություններից մեկը մասնագիտության ընտրությունն է: Դեռ իններորդ դասարանի աշակերտ էի, երբ կանգնած էի այդ դժվարին ընտրության առաջ: Իսկ այսօր հպարտորեն նշում եմ, որ սովորում եմ Հայաստանի մայր բուհում՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանում, և հստակ դիրքորոշում ունեմ՝ դառնալ աշխատանքին նվիրված ուսուցչուհի:

Մանկավարժության հանդեպ սիրո առաջին կաթիլները սրտիս մեջ ցողել է մայրս: Ծնված օրվանից նրա երգերն ու հեքիաթները միշտ ուղեկցել են ինձ: Լավ հիշում եմ՝ իր հետ ինձ տանում էր իր աշխատանքի վայր՝ մանկապարտեզ, և ես ականատես էի լինում իր անմնացորդ նվիրված աշխատանքին, հոգատարությանը: Գիտե՞ք, երբ նոր նյութ էր հաղորդում իր սաներին, նրանց դաստիարակում արժանի զավակ, աչքերն աննկարագրելի փայլում էին: Այդ օրվանից հետո կանգնում էի հայելու առջև և փորձում կրկնել մորս շարժուձևը, բայց դեռ թրծվելու տեղ ունեի:

Տարիներ անց սրտի մեծ թրթիռով առաջին քայլերն եմ անում դեպի դպրոց և նկատում եմ մորս՝ ինձնից առավել հուզված դեմքը: Նա, ձեռքս պինդ բռնած, ուղեկցում է ինձ դասարան: Այն գիտակցումն ունեի, որ առաջին ուսուցչուհիս մորս պես բարի, հոգատար և բանիմաց է լինելու: Եվ ես չէի սխալվում: Յուրաքանչյուր լավ ուսուցիչ աշակերտի մեջ արթնացնում է ինչ-որ զգացում՝ հետաքրքրություն, սեր կամ ներշնչանք: Եվ դասվարս իր օրինակով իմ մեջ ավելի է ամրապնդում ցանկությունը՝ գնալ իր հետքերով:

Մասնագիտական որոնումներս շարունակվում են, մինչ այն պահը, երբ հանդիպում եմ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներիս թե՛ դպրոցի ավագ դասարանում և թե՛ քոլեջում ուսանելու տարիներին: Նրանց նվիրվածությունն ու ոգևորությունը դառնում են ինձ համար մասնագիտական ընտրության կարևոր ազդակ: Նրանք սովորեցնում են գնահատել մայրենի լեզվի հարստությունն ու գրականության խորքային իմաստները: Դեռ սրտիս մեջ դաջված է Ավ. Իսահակյանի հետևյալ խոսքը, որ առաջին անգամ լսեցի ուսուցչիցս. «Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հզոր է այն ազգը, որ ունի լավագույն ուսուցչություն: Ծնողները երեխային տալիս են մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, բարի կամք և բարձրագույն իդեալներ»:

Օրեր շարունակ վերլուծում էի մեծն Իսահակյանի խոսքը: Եվ գիտակցելով խոսքի խորությունը՝ հասկացա, որ ուսուցչի աշխատանքը միայն մասնագիտություն չէ, այլ՝ առաքելություն: 2020 թվականի պատերազմն է՛լ ավելի արագացրեց՝ ուղենշելու հետագա անելիքներս. պետք է լինել արժանապատիվ հայ և ապագա սերնդին սովորեցնել սիրել հայրենիքը, որը սկսվում է լեզվից: Այսպիսով, մանկությունից եկող սերը, մորս օրինակն ու իմ ուսուցիչների ազդեցությունը միասին ուղի հարթեցին դեպի ուսուցչություն: Վստահ եմ, որ իմ ընտրած ուղին ճիշտ է, քանի որ այն հնարավորություն է տալիս ներդրում ունենալ հասարակության զարգացման մեջ և սերունդներին փոխանցել ամենաթանկը՝ գիտելիքն ու արժեքները:

Ընտրածս ուղին, այո՛, բարդ է, բայց և բազմաբովանդակ, շատ պատասխանատու, և մասնագիտությունների մեջ ամենակարևորը, քանի որ գործ ունենք մանուկ հոգու հետ, որ նոր պետք է ձևավորվի: Մեր գերագույն խնդիրը պետք է լինի ոչ միայն առարկա դասավանդելը, այլ լավ մարդ դաստիարակելը, մտածողություն ձևավորելն ու դեպի ինքնաճանաչում առաջնորդելը: Լինել ուսուցիչ՝ նշանակում է դառնալ ընկեր, խորհրդատու, երբեմն նաև ոգեշնչող օրինակ: Այն գիտակցումը, որ կարող ես քո օրինակով ձևավորել երեխայի ապագան,փոխել մտածելակերպը և հավատ ներշնչել իր ուժերի հանդեպ, ամենամեծ պարգևն է: Հենց ուսուցչի շնորհիվ է, որ աշակերտը բացահայտում է իր կարողությունները, ձեռք բերում ինքնավստահություն և գտնում իր կոչումը: Ուսուցչի աշխատանքի պտուղները երևում են տարիներ անց՝ աշակերտների ձեռքբերումներում ու նրանց արժեհամակարգում: Այդ պատճառով էլ կարելի է ասել, որ երկրի ու ժողովրդի ապագան մեծապես ձևավորվում է ուսուցչի կողմից: Մի միտք էլ հղացավ, որ ուսուցիչը նման է կավագործին: Վերջինս ինչպես ձևում է կավը իր ձեռքերով, այնպես էլ ուսուցիչը ձևում է աշակերտի միտքն ու հոգին՝ տալով նրան իր ձևը, գեղեցկությունն ու արժեքը:

Պե՛տք է միշտ հիշել՝ յուրաքանչյուր մասնագետ, անկախ ընտրած ոլորտից, իր հաջողության համար մեծապես պարտական է ուսուցչին: Ես նույնպես պարտական եմ նրանց, քանի որ տարիներ առաջ կատարած իրենց անձնուրաց աշխատանքի շնորհիվ է, որ այսօր վստահ քայլերով գնում եմ առաջ և գրանցում հաջողություններ: Շնորհակալ եմ ձեզ, իմ անգի՛ն ուսուցիչներ:

Շուշան ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ